



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐ
Է. ԳՐԻԳՈՐՅԱՆ



« 07 » 04 2020թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 000032

Ձեռնարկողը՝

«Վարպուֆ» ՍՊԸ

Ք. Երևան, Ներքի Շենգավիթ
11 փ., 2-րդ նրբ. 23/8

Գործունեությունը՝

Կողեսի գաբրո-սիենիտների հանքավայրի արդյունահանման
աշխատանքային նախագծի շրջակա միջավայրի վրա
ազդեցության գնահատման հաշվեքվություն
Լոռու մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
տնօրենի պաշտոնակատար՝



Ա. Դոնոյան

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 000032

<<07>> 04 2020թ.

**«Կողեսի գաբրո-սիենիտների հանքավայրի արդյունահանման»
աշխատանքային նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության
գնահատման հաշվետվություն**

Ներածական մաս.

Պատվիրատու՝	«Վարտուֆ» ՍՊԸ
Նախագծող՝	«Վարտուֆ» ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	- Շրջակա միջավայրի վրա ազդեցության (ՇՄԱԳ) հաշվետվություն, - նախագծային փաստաթուղթ
Տեղադրման վայրը՝	Լոռու մարզ

Լոռու մարզի Կողեսի գաբրո-սիենիտների օգտակար հանածոյի պաշարները 1989թ. հունվարի 1-ի դրությամբ հաստատվել են ԽՍՀՄ Պաշարների պետական հանձնաժողովի կողմից՝ 1977թ. հոկտեմբերի 13-ի, թիվ 308 արձանագրությամբ, A կարգով, 545.5հազ.մ³ քանակով: Հանձնաժողովի կողմից հաստատվել է նաև մակաբացման ապարների քանակը, որը կազմում է 131.6հազ.մ³ ծավալ, որից 2.14հազ.մ³-ը նստվածքային ապարներ են, իսկ 129.46հազ.մ³-ը՝ հողմնահարված գաբրո-սիենիտներ:

Գաբրո սիենիտները պիտանի են երեսպատման քարերի արտադրության համար՝ համաձայն «Блоки из природного камня для производства облицовочных изделий» 9479-84 ԳՈՍՏ-ի, իսկ արտադրական թափոնները, ինչպես նաև մակաբացման շերտի գաբրո-սիենիտների մոտ 70%-ը՝ խճի արտադրության համար՝ համաձայն «Щебень из природного камня для строительных работ» 8267-82 ԳՈՍՏ-ի: Պիտանի բլոկների ելքը կազմում է 20.0%:

Կողեսի գաբրո-սիենիտի հանքավայրը տեղակայված է Կողես գյուղից 1.5կմ հյուսիս և հանդիսանում է Կողեսի ինտրուզիվ զանգվածի հյուսիսային ելքը: Գաբրո-սիենիտների ինտրուզիվի ելքն ունի մերձլայնական ուղղվածություն: Հանքավայրում ինտրուզիվ զանգվածը ներկայացված է հիմնականում գաբրո-սիենիտների բաղադրությամբ, որոնք մակերևութային հատվածում բավականին փոփոխված են:

Հանքավայրի գեոմորֆոլոգիական պայմանները բարդ են՝ ռելիեֆը կտրուկ բարձրանում է դեպի հյուսիս: 150.0-200.0մ-ից հարաբերական բարձրությունը տատանվում է 60.0-70.0մ: Հանքավայրի արևմտյան կողմից ինտրուզիվ զանգվածը մեղմանում է 10.0-15.0մ բարձրությամբ ժայռաբեկորների տեսքով: Դեպի արևելք ինտրուզիվ զանգվածը ընդհատվում է կիրճ: Հետախուզված հանքավայրի տեղամասի տարածքը գործնականում օղակալված է,



ստորերկրյա ջրերի հորիզոններ և ելքեր (աղբյուրներ) հայտնաբերված չեն: Ստորերկրյա ջրերի բացակայությունը պայմանավորված է հանքավայրի տարածքի երկրաբանական և գեոմորֆոլոգիական առանձնահատկություններով: Հանքավայրի շրջանում մթնոլորտային տեղումների տարեկան միջին քանակը կազմում է մոտ 600մմ:

Նկարագրական մաս. «Վարտուֆ» ՍՊԸ-ն ՊՎ-331 ընդերքօգտագործման պայմանագրի շրջանակներում, ՇԱԹՎ-29/331 օգտակար հանածոների արդյունահանման թույլտվության իրավունքով Լոռու մարզի Կողեսի գաբրո-սիենիտների հանքավայրում կատարում է օգտակար հանածոյի արդյունահանում: 01.01.2019թ. դրությամբ բացահանքից արդյունահանվել է 21.585հազ.մ³ /համաձայն 5ԼՀ հաշվետվության/ գաբրո-սիենիտների և ևս 638.0մ³ մարվող պաշար՝ ս/թ. 9 ամսվա կտրվածքով: Մնացորդային պաշարները A կարգով կազմում են 523.277հազ.մ³:

Հանքավայրի նախագծվող տարածքի 1.9հա մակերեսը /նախկին լեռնահատկացման սամաններում/ արտադրական նշանակությամբ ընդերքօգտագործման հողեր են, իսկ մնացած 1.88հա՝ գյուղատնտեսական նշանակության արոտավայրեր են:

Բացահանքն ունի 2.24հա մակերես և սահմանափակված է հետևյալ կոորդինատներերով՝ ARM WGS-84 համակորգով՝

Y =8461082.4	X=4540839.8
Y =8461100.3	X=4540870.2
Y =8461124.4	X=4540896.2
Y =8461145.3	X=4540910.0
Y =8461160.9	X=4540934.7
Y =8461175.0	X=4540958.5
Y =8461185.9	X=4540972.5
Y =8461198.6	X=4540979.3
Y =8461204.5	X=4540979.3
Y =8461214.7	X=4540976.8
Y =8461237.1	X=4540950.9
Y =8461254.5	X=4540926.7
Y =8461267.2	X=4540904.5
Y =8461273.7	X=4540878.1
Y =8461273.7	X=4540870.1
Y =8461270.6	X=4540865.7
Y =8461240.8	X=4540841.2
Y =8461230.1	X=4540824.7
Y =8461226.9	X=4540812.0
Y =8461224.1	X=4540803.3
Y =8461195.4	X=4540772.9
Y =8461184.5	X=4540766.5
Y =8461164.3	X=4540766.4
Y =8461159.1	X=4540786.3

Քանի որ հանքավայրը երկար տարիներ արդյունահանվել է և ժամանակին կատարվել են անհրաժեշտ լեռնակապիտալ աշխատանքները, ուստի հետագա արդյունահանումը կշարունակվի արդեն գործող հանքախորշից /1401.5մ հորիզոն/, միաժամանակ, նախագծված արտադրողականության հասնելու համար կիրականացվի նոր հորիզոնների բացումը բացահանքի հարավ արևմտյան /1381.5մ հորիզոն/ և կենտրոնական /1404.0մ հորիզոն/ մասից:



Սույն աշխատանքային նախագծով նախատեսվում է.

- հանքավայրը մշակել բաց լեռնային աշխատանքներով,
- բացահանքային դաշտի օտարման տարածքը կազմելու է 3.78հա՝ այդ թվում բացահանք /մակաբացման սահմաններով/՝ 2.24հա, N1-ին լցակույտ՝ 0.27հա, N3-րդ լցակույտ՝ 1.15հա, ճանապարհներ՝ 0.1հա, արտադրական հրապարակ՝ 0.025հա:
- Բացահանքում ընդգրկված հաշվեկշռային (մարվող) պաշարների քանակը կազմում է 100.0հազ.մ³ ծավալ, կորզվող պաշարները՝ 97500.0մ³: Տարեկան արտադրողականությունը, ըստ մարվող պաշարի, ընդունվում է 2000.0մ³, կորզվող պաշարները՝ 1950մ³: Մակաբացման ապարների /մնացորդային/ ծավալը կազմում է 121.6հազ.մ³, որից 1.8հազ.մ³-ը նստվածքային ապարներ են, իսկ 119.8հազ.մ³՝ հողմահարված գաբրո-սիենիտներ:
- Հանքարդյունահանման աշխատանքները կատարել շուրջտարյա աշխատանքային ռեժիմով՝ 260 օր, միահերթ, հնգօրյա աշխատանքային շաբաթով՝ 8 ժամյա տևողությամբ:
- Բացահանքի ծառայման ժամկետը կազմում է 50 տարի:
- Գործող հանքախորշից միաժամանակ նախագծված արտադրողականության հասնելու համար իրականացնել նոր հորիզոնների բացում՝ բացահանքի հարավ-արևմտյան և նրա կենտրոնական մասից դեպի բացման առաջին՝ համապատասխանաբար, 1381.5մ և 1404.0մ բարձրության հորիզոններ:
- Կատարվելու են միայն որոշ աշխատանքներ ճանապարհների վերակառուցման և բարեկարգման հետ: Նախատեսվում է նաև բացահանքի շահագործման տարածքից հեռացնել նախկին արդյունահանման ժամանակ մակաբացման ապարների (N1 լցակույտի) որոշ մասը:
- Մակաբացման ապարները ներկայացված են 0.2մ միջին հզորությամբ 1.8հազ.մ³ ծավալով նստվածքային ապարներով և 11.1մ միջին հզորությամբ 119.8հազ.մ³ ծավալով գաբրո-սիենիտների հողմահարված ապարների կտորներով, որոնք տեղավորվելու են N3 լցակույտ:
- Հանքավայրի լեռնատեխնիկական և լեռնաերկրաբանական պայմանները կանխորոշում են բացահանքի շահագործումը միակողմանի, ընդլայնական ընթացքաշերտերով մշակման համակարգով: Հանքաստիճանի բարձրությունը՝ 2.5մ է: Հորիզոնի մշակումը կատարվում է կիրառելով հիմնականում հիդրոճեղքման եղանակը:
- Բլոկների տեղափոխումը կատարվելու է սպառողի ավտոինքնաթափով: Արտադրական թափոնները տեղափոխվելու են 0.2կմ հեռավորության վրա գտնվող N2 ժամանակավոր պահեստարան՝ հետագայում սպառողների կողմից իրացվելու նպատակով:
- Բացահանքի աշխատավորների կենցաղային հարցերի ապահովման համար նախագծով ընդունվել են վագոն-տնակներ:
- Խմելու և տեխնիկական ջուրը բերվելու է ավտոնոմ տեղանով և պահվելու է հատուկ տարողությունների մեջ:
- Իրականացվելու է խախտված հողերի լեռնատեխնիկական և կենսաբանական վերակուլտիվացիա:

Ելնելով հանքավայրի տեղադրման լեռնաերկրաբանական, լեռնատեխնիկական պայմաններից, օգտակար հանածոյի շերտի տեղադրման պարամետրերից և մակաբացման ապարների փոքր ծավալներից՝ մշակումը նախատեսվում է բաց լեռնային աշխատանքներով:

Նախագծվող բացահանքի վերջնական եզրագծի պարամետրերն են.

- ամենամեծ երկարությունը՝ 197.0մ,
- ամենամեծ լայնությունը՝ 118.0մ,
- բացահանքի առավելագույն մշակման խորությունը՝ մինչև 1379.0մ հորիզոնը,
- մշակվող հաստաշերտի միջին հզորությունը՝ 9.7մ:



Բացահանքը շահագործվելու է միակողանի, ընդլայնական ընթացքաշերտերով մշակման համակարգով: Ընդունված մշակման համակարգի տարրերն են.

1. աստիճանի բարձրությունը՝ 2.5մ,
2. աշխատանքային հանքաստիճանի թեքման անկյունը՝ 90° ,
3. աշխատանքային հրապարակի նվազագույն լայնությունը՝ 18.0-20.0մ,
4. անվտանգության բերմայի լայնությունը՝ 1.0մ:

Բացահանքը շահագործելիս առաջանում են կորուստներ, որոնք մնում են բացահանքի կողերի բնամասերում՝ 2500.0մ^3 ծավալով (2.5%), իսկ շահագործական կորուստները բացակայում են 0.0մ^3 (0%):

Հորատապայթեցման աշխատանքները կատարվում են միայն անհրաժեշտության դեպքում՝ մակաբացման շերտի հեռացման ժամանակ, պայթանցքային լիցքերի կիրառումով, համաձայնեցնելով ոլորտում իրավասու լիազոր մարմնի հետ:

Բլոկների (մեծ աղյուսների) արդյունահանումը իրականացվելու է հիմնականում հորատասեպային եղանակով՝ հիդրոսեպ մեքենայի կիրառմամբ:

Հանությից առաջացած արտադրական թափոնները իրենցից ներկայացնում են գաբրո-սիենիտների կտորներ և կազմելու են 78000.0մ^3 ծավալ: Դրանք պիտանի են խճի արտադրության համար և տեղափոխվելու են N2 ժամանակավոր լցակույտ պահեստարան: N2 լցակույտի /պահեստարանը/ զբաղեցրած տարածքի մակերեսը կազմելու է 280.0մ^2 և նախատեսված է մոտ 500.0մ^3 ծավալի արտադրական թափոններ կուտակելու համար, որոնք տարածքից կհեռացվեն սպառողի տրանսպորտային միջոցներով: Այստեղ պահեստավորվելու են 1-ից 3 ամսվա կտրվածքով առաջացած արտադրական թափոնները:

Հանքարդյունահանման աշխատանքները սկսելիս նստվածքային ապարների շերտը տեղափոխվելու է բացահանքի հարավային մասում գոյություն ունեցող՝ 2700.0մ^2 մակերեսով արտաքին N1 լցակույտ՝ տարածքների հետագա վերականգնման նպատակով:

N3 լցակույտը, որը ձևավորվելու է գաբրո-սիենիտների ճաքճված, հողմահարված ապարների հաշվին, ստորին մասում կունենա 11500.0մ^2 մակերես, վերին մասում՝ 3600.0մ^2 : Առաջացող լցակույտի միջին բարձրությունը կազմելու է 14.5մ՝ 35° -ի թեքության դեպքում:

Բացահանքի մատակարարումը տեխնիկական ջրով կատարվում է հորատման աշխատանքների ժամանակ փոշեղադարեցման, աշխատանքային հրապարակների, ճանապարհների և լցակույտերի ջրման նպատակով: Զուրը բերվում է KO-002 մակնիշի ջրցան-վացող մեքենայով: Խմելու ջրի մատակարարումը կատարվում է ԱՊՀ-ԵԱԾ -1.4 ջրի ցիստեռնով:

Հանքավայրի հիդրոերկրաբանական պայմանների համաձայն, գետնաջրերը բացակայում են: Հետևաբար բացահանքում ջրհեռացնող կառուցվածքներ չեն նախատեսվում: Աշխատողների խմելու և կենցաղային նպատակներով ջրածախսը $68.64\text{մ}^3/\text{տարի}$ է, օրական՝ միջին հաշվով 0.264մ^3 : Կենցաղային կեղտաջրեր՝ $0.22\text{մ}^3/\text{օր}$ ծավալով, հավաքվելու են անջրաթափանց բետոնային լցարանում, որտեղից էլ պարբերաբար տեղափոխվելու են համապատասխան ծառայությունների կողմից՝ սահմանված կարգով: Համաձայն նորմատիվների ընդհանուր ջրի ծախսը փոշենստեցման համար (բացահանքի աշխատանքային հրապարակ՝ 1400.0մ^2 , լցակույտեր՝ 6500.0մ^2 , ավտոճանապարհներ՝ 3500.0մ^2 , ընդամենը 11400.0մ^2 մակերեսով) կկազմի 5700.0լ:

Ըստ 245-71 սանիտարական նորմերի, 2-րդ դասի /категории/ լեռնային ապարների հանքավայրերի համար սանիտարա-պաշտպանիչ գոտու մեծությունը կազմում է 500.0մ, որը պահպանվում է, հաշվի առնելով այն հանգամանքը, որ մոտակա Կողեն բնակավայրը նախատեսվող գործունեությունից գտնվում է 1.5կմ հեռավորության վրա:

Արտանետումների ազդեցությունը գնահատելու նպատակով կատարվել են մթնոլորտում դրանց ցրման հաշվարկ՝ «Ռադուգա» համակարգչային ծրագրով:

Մթնոլորտում վնասակար նյութերի ցրման հաշվարկների արդյունքում հաստատված է, որ սպասվելիք մերձգետնյա կոնցենտրացիաները գտնվում են արդիրապարակում և բնակելի գոտիների համար սահմանված նորմերում:

Հաշվի առնելով հանքավայրի հեռավորությունը մոտակա բնակավայրերից (1.5-2,3կմ), նախալեռնաթեքվածքային, թույլ ալիքաձև ծորակներով մասնատված ռելիեֆը, մեկ հերթափոխով աշխատանքային ռեժիմը՝ գումարային հաշվարկային ծայնային բնութագիրը շրջակա բնակավայրերի տարածքում աղմուկի մակարդակը կլինի բնակելի գոտիների համար սահմանված նորմերից /45ԴԲԱ/ շատ ցածր:

Կողեսի գաբրո-սիենիտների հանքավայրի տարածքում բացակայում են բուսականությունը, գետային ցանցերը, շինարարական կառույցները և հուշարձանները: Շահագործման ժամանակ կառաջանան փոշեառաջացման օջախներ և ռելիեֆի փոփոխություն: Բացահանքի շահագործման ժամանակ, ըստ ներկայացված նյութերի, ձեռնարկողը նախատեսում է իրականացնել հետևյալ կանխարգելիչ, մեղմացնող միջոցառումները.

- փոշենստեցման նպատակով փոշեառաջացման օջախների (աշխատանքային հրապարակները, հանքախորշերը, լցակույտերը, մուտքային և դեպի լցակույտեր տանող ավտոճանապարհը և այլ) ինտենսիվ ջրում տարվա չոր և շոգ եղանակներին (օրեկան 2 անգամ),
- բացահանքի մշակված տարածության լեռնատեխնիկական և կենսաբանական վերակուլտիվացիա,
- բացահանքի արդյունաբերական հրապարակի շրջակայքի կանաչապատում թփուտներով, նախապատվությունը տալով այն ծառերին և թփերին որոնք բնորոշ են տվյալ ֆլորիստիկ շրջանին,
- դիզելային շարժիչներով աշխատող լեռնատրանսպորտային սարքավորումների վրա խլացուցիչների և զտիչների տեղադրում,
- արտադրական հրապարակում՝ հատուկ հատկացված տեղում, նավթամթերքների պահեստավորում և պահում (բացօթյա կամ ծածկի տակ պահեստ), որին տրվում է համապատասխան թեքություն թափված նավթամթերքների հոսքը դեպի այն հավաքող բետոնապատված փոս ուղղորդելու համար,
- օգտագործված յուղերի ու քսայուղերի հավաքում առանձին տարաների մեջ՝ հետագա ուտիլիզացման կամ երկրորդական վերամշակման համար,
- հնամաշ դետալների ու մասերի հավաքում հատկացված առանձին տեղում և հանձնում որպես մետաղի ջարդոն,
- տարածքից կենցաղային աղբի տեղափոխվում մոտակա աղբահավաք կետեր,
- կեղտաջրերի հավաքում հորատիպ զուգարանում, որը հետագայում դատարկվելու է հատուկ ծառայության կողմից:

Կողեսի գաբրո-սիենիտի հանքավայրի շահագործման ընթացքում «Վարտուֆ» ՍՊ ընկերությունը նախատեսում է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն ու մեղմացմանն ուղղված մշտադիտարկումներ: Արտադրական հրապարակում նախատեսվելու է համապատասխան հաղորդակցման համակարգ (ինֆորմացիոն և շարժական կապ)՝ արտակարգ իրավիճակների ժամանակ ձեռնարկության վարչական կազմի, տեղական ինքնակառավարման մարմինների, շտապ օգնության հետ կապ հաստատելու նպատակով:

Հաշվի առնելով այն հանգամանքը որ տվյալ նախագծով, կառուցվող հանքավայրի հաստատված պաշարների միայն մոտ 20.0%-ը, բացահանքի /հաստատված պաշարների եզրագծով/ 1.24հա տարածքի լեռնատեխնիկական վերակառուցում է նախատեսվում: Այդ աշխատանքները կիրականացվեն հանքավայրի ողջ պաշարների արդյունահանումից հետո: Այս փուլում կվերականգնվեն լցակույտերի ողջ մակերեսները



/11500.0մ²/, ինչպես նաև՝ նախկինում տեղադրված արտաքին լցակույտի տարածքը /2700.0մ²/, արտադրական հրապարակը /250.0մ²/, ավտոճանապարհները /2900.0մ²/: Վերականգնվող ընդհանուր մակերեսը կկազմի 17350.0մ² /1.735հա/: Կենսաբանական ռեկուլտիվացման հաշվարկը իրականացվել է ըստ ոլորտում ընդունված գործակցի՝ 200.0հազ.դրամ մեկ հեկտարի համար, որը 2.54հա տարածքի կենսաբանական ռեկուլտիվացման դեպքում կկազմի 508.0հազ.դրամ: Ռեկուլտիվացման համար նախատեսված ընդհանուր ծախսերը /լեռնատեխնիկական և կենսաբանական/ կկազմեն՝ 1245.3հազ.դրամ:

Շահագործման ընթացքում կոմուլիատիվ ազդեցություններ չեն առաջանում: Շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն ու մեղմացմանն ուղղված մշտադիտարկումների իրականացման նպատակով նախատեսվում է տարեկան մասնահանել 150.0հազ.դրամ:

Պատճառաբանական եզրահանգումներ: Վերլուծելով ներկայացված նախագծային փաստաթղթերի փորձաքննության արդյունքները, շրջակա միջավայրի նախարարության համապատասխան ստորաբաժանումներից ստացված կարծիքները, 20.12.2019թ. արտադրական վտանգավոր օբյեկտների նախագծային փաստաթղթերի տեխնիկական անվտանգության փորձաքննության դրական N3053 եզրակացությունը, Կողեսի բնակավայրի տարածքում իրականացված հանրային քննարկումների արդյունքները՝ կարելի է անել հետևյալ եզրահանգումները. նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում Կողեսի գաբրո-սիենիտի հանքավայրի արդյունահանման նախագծի ՇՄԱԳ հաշվետվությունում նախատեսված միջոցառումների արդյունքում տարածքի աղտոտվածությունը՝ շրջակա միջավայրի բոլոր բաղադրիչներով, կգտնվի թույլատրելի նորմերի սահմաններում: Նախագծում ներառված են հոսքաջրերի հեռացման և մաքրման, աղմուկի մակարդակի, թափոնների հավաքման և դրանց հնարավոր ազդեցությունների մեղման, աղբահեռացման, մթնոլորտի աղտոտվածության նվազեցման, խախտված տարածքների ռեկուլտիվացիայի և մոնիթորինգի իրականացման բավարար միջոցառումները:

Փորձաքննական պահանջներ

1. Աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է խստագույնս հետևել ՇՄԱԳ հաշվետվությունում և նախագծային փաստաթղթերում ամրագրված տեխնոլոգիական նախագծման նորմերին, բնապահպանական և սոցիալական կառավարման ծրագրի պահանջներին:
2. Գործունեության ընթացքում իրականացվող շրջակա միջավայրի բաղադրիչների (ջուր, օդ, հող, կենդանական և բուսական աշխարհ և այլն), ինչպես նաև հետնախագծային վերլուծության ծրագիրը համապատասխան պահանջի դեպքում պետք է տրամադրվի պետական շահագրգիռ մարմիններին և հանրությանը: Մոնիթորինգի արդյունքների չբավարարման դեպքում անհրաժեշտ է նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ պարտադիր պահպանելով բնապահպանական, կառուցման և շահագործման հետ կապված բոլոր նորմերը:
3. Անհրաժեշտ է ստանալ ՀՀ կառավարության որոշումը՝ հողերի նպատակային և գործառնական նշանակության փոփոխության վերաբերյալ:
4. Հանքարդյունահանման աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է պարբերաբար իրականացնել շրջակա միջավայրի բաղադրիչների մոնիթորինգ և արդյունքները ՀՀ կառավարության 2018թ. փետրվարի 22-ի N191-Ն որոշմամբ սահմանված ժամկետներում և ձևաչափով՝ ներկայացնել շրջակա միջավայրի նախարարություն:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Վարտուֆ» ՍՊԸ կողմից Կողեսի գաբրո-սիենիտի հանքավայրի արդյունահանման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Գլխ. Մասնագետ



4. Մոլվախյան